

ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ ԳՈՅԱԿԱՆՆԵՐՈՒ / ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՀՈՒՈՎՈՒՄՆԵՐԸ

Ստորեւ տրուած դասաւորումը ըստ՝ Հայերէն լեզուի դասագիրք-ին. ան հիմնուած է եզակի սեռական-տրական հոլովին հոլովիչներուն վրայ:

Յակոբ Չոլաքեան կ'ընէ յաւելեալ 7 տարբերակումներ՝ ք/ց – ոց – աց, ից, անց – իւ>եա – ու>ա – ալ>օ – (ը)>ե հոլովումները, որոնք այլապէս ընդանրապէս նշուած են ստորեւ տրուած հոլովումներուն մէջ: Առաջին երկուքին մասին տեսնել ստորեւ:

	Ի հոլովում	
	Եզակի	Յոգնակի
Ուղղական / Հայցական Սեռական / Տրական Բացառական Գործիական	վարպետ(ը) վարպետի(ն) վարպետէ(ն) վարպետով(ը)	վարպետներ(ը) վարպետներու(ն) վարպետներէ(ն) վարպետներով(ը)
	- Այս հոլովումը, որ ամենէն աւելի գործածուող ձեւն է, Յովհաննէս Գազանճեան զայն կը նկատէ կանոնաւոր հոլովում: Արմենակ Եղիայեան կը կոչէ ի, է, ով հոլովում՝ նկատի առնելով բոլոր հոլովներու հոլովիչները, իսկ Յակոբ Չոլաքեան՝ Ի կամ ընդհանրական հոլովում: Բոլոր միւս հոլովումները երբեմն մասնակի, երբեմն ամբողջովին սկսած են հակիլ այս հոլովման: - Բաղաձայնով եւ է, ի, ու վերջացող բառերուն վրայ ուղղակի կ'աւելնան հոլովիչները: Նոյնպէս՝ ալ, ոյ վերջացող բառերուն պարագային: - Ա-ով եւ ո-ով վերջացող բառերը հոլովիչին կը կապուին յ ձայնակապով. օրինակ՝ Արա – Արայի, զերո – զերոյի: Իսկ իւ-ով եւ էօ-ով վերջացող օտար բառերը՝ առանց ձայնակապի. օրինակ՝ Քամիւ – Քամիի, Մոնրէօ – Մոնրէօի: Բառավերջի օ-ն կը վերածուի ո-ի ու կը ստանար յ ձայնակապը, օրինակ՝ քիւլոյի, Կարոյի: - Կարգ մը բառեր յաճախ գրաբարաձեւ ալ կը հոլովուին (սեռական-տրական). • Տուն – տան • Շուն – շան • Անուն – անուան • Ժողովուրդ – ժողովրդեան	

	· Ծնունդ – ծննդեան · Գալուստ – գալստեան · Կայսր – կայսեր · Դուստր – դստեր - Կարգ մը բառերու ներքին ի կամ ա ձայնաւորը կրնայ նաեւ սղուիլ, օրինակ՝ ճակատի – ճակտի, գիրքի – գրքի, լուսին – լուսնի (բուն, բայց ոչ փոխաբերական իմաստին պարագային, օրինակ՝ գլխու ցաւ, բայց գիրքի երկրորդ գլուխին մէջ...): - Այս հոլովումին կ'ենթարկուին նաեւ գոյականաբար գործածուող խօսքի մասեր, ածականները, թուականները, որոշ դերբայներ, օտար լեզուներէ կատարուող փոխառութիւնները, յատուկ անունները:
--	---

	ՈՒ հոլովում	
	Եզակի	Յոգնակի
Ուղղական / Հայցական Սեռական / Տրական Բացառական Գործիական	նաւ(ը) նաւու(ն) նաւէ(ն) նաւով(ը)	նաւեր(ը) նաւերու(ն) նաւերէ(ն) նաւերով(ը)
	- Այս հոլովումը կը կիրարկուի դար, ժամ, էշ, կով, հայ, հաւ, հով, ձի, մարդ, պահ, արեւ եւ նման բառերու պարագային: - Երբ այդ բառերը կը բարդուին, յաճախ նաեւ կը հակին ի հոլովումին. օրինակ՝ ոսկեդարի, գետաձիի: - Այդ բառերէն ոմանք երկու ձեւով ալ կը հոլովուին. օրինակ՝ գլխու եւ գլուխի, հովու եւ հովի: - Անորոշ դերբայներն ալ ու-ով կը հոլովուին. օրինակ՝ քալելու, խօսելու: - Կարգ մը բառեր ունին նաեւ յոգնակի անկանոն հոլովումներ. · Մարդ – մարդիկ, մարդոց, մարդոցմէ, մարդոցմով · Տղայ – տղաք, տղոց, տղոցմէ, տղոցմով	

	ԵԱՆ հոլովում	
	Եզակի	Յոգնակի
Ուղղական / Հայցական Սեռական / Տրական Բացառական Գործիական կամ	գիտություն(ը) գիտութեան(ը) գիտութենէ(ն) գիտութիւնով(ը) գիտութեամբ(ը)	գիտութիւններ(ը) գիտութիւններու(ն) գիտութիւններէ(ն) գիտութիւններով(ը)
	- Այս հոլովումը կը կիրարկուի բոլոր ութին վերջացող բառերուն, ինչպէս երբեմն նաեւ առաւօտ, երեկոյ, ժողովուրդ եւ կարգ մը այլ բառերու պարագային (տես վերը ի հոլովումին նոթերը): - Կայ նաեւ յոգնակի սեռական-տրական ի պարագային եանց ձեւը, օրինակ՝ գիտութեանց:	

	ՌԻԱՆ հոլովում	
	Եզակի	Յոգնակի
Ուղղական / Հայցական Սեռական / Տրական Բացառական Գործիական	գիշեր(ը) գիշերուան գիշերուրնէ գիշերով(ը)	գիշերներ(ը) գիշերներու(ն) գիշերներէ(ն) գիշերներով(ը)
	- Այս հոլովումը կը կիրարկուի յատկապէս ժամանակ ցոյց տուող բառերուն, ինչպէս օր, շաբաթ, ամիս, տարի, վաղը, ժամանակ եւ այլն: - Սակայն անոնցմէ շատեր տեղին համաձայն կը կիրարկուին ի կամ ու հոլովով, օրինակ՝ ատենին հասայ, մէկ ժամուան մէջ, կամ տարիէ-տարի, օրը-օրին եւ այլն: Հիմակուրնէ կը ներառէ յաւելեալ կ ձայնակապը:	

	Ան հոլովում	
	Եզակի	Յոգնակի
Ուղղական / Հայցական Սեռական / Տրական Բացառական Գործիական կամ	թոռ(ը) թոռան(ը) թոռէ(ն) թոռով(ը)	թոռներ(ը) թոռներու(ն) թոռներէ(ն) թոռներով(ը)
	- Այս հոլովումը կը կիրարկուի ամառ, դուռ, մատուռ, բեռ, աղջիկ եւ նման բառերուն, օրինակ՝ ամռան (նախապէս՝ ամրան), դռան (նախապէս՝ դրան), աղջկան, նաեւ ում վերջացող բառերուն, օրինակ՝ ուսման, հատուցման: - Ամառ եւ ձմեռ նաեւ կը հոլովուին ամառուան, ձմեռուան: - Շարժում կրնայ հոլովուիլ շարժումին կամ շարժման:	

	ՈՋ հոլովում	
	Եզակի	Յոգնակի
Ուղղական / Հայցական Սեռական / Տրական Բացառական Գործիական	կին(ը) կնոջ(ը) կնոջմէ(ն) կնոջմով(ը)	կիներ(ը) կիներու(ն) կիներէ(ն) կիներով(ը)
	- Այս հոլովումը կը կիրարկուի քոյր, տէր, կեսուր, աներ, ընկեր եւ նման բառերու պարագային: Բայց ոմանց պարագային հակումը դէպի ի հոլովումն է, օրինակ՝ ընկեր – ընկերէն, աներ – աներէն, պահելով սեռական-տրականը ոջ հոլովումով, իսկ տագր եւ կեսուր արդէն ամբողջովին անցած են ի հոլովումին:	

	Օ հոլովում	
	Եզակի	Յոգնակի
Ուղղական / Հայցական Սեռական / Տրական Բացառական Գործիական կամ	հայր(ը) հօր(ը) հօրմէ(ն) հօրմով(ը)	հայրեր(ը) հայրերու(ն) հայրերէ(ն) հայրերով(ը)
	- Այս հոլովումը կը կիրարկուի հայր, մայր եւ եղբայր բառերուն եւ անոնցմով կազմուած բարդ բառերուն պարագային, սակայն բացի սեռական-տրականէն, միւս հոլովները արդէն սկսած են հետեւիլ ի հոլովումին:	

	ՈՅ հոլովում	
	Եզակի	Յոգնակի
Ուղղական / Հայցական Սեռական / Տրական Բացառական Գործիական	սէր(ը) սիրոյ(ն) սէրէ(ն) սիրով(ը)	սէրեր(ը) սէրերու(ն) սէրերէ(ն) սէրերով(ը)
	- Այս հոլովումը կը կիրարկուի սէր, Աստուած, Պոլիս եւ իա վերջաւորութեամբ տեղանուններուն (բայց ոչ անձնանուններուն), օրինակ՝ Կիլիկիոյ, Անգլիա, բայց Եդիսայի, սակայն բացի Աստուած բառէն, միւսներու բացառական եւ գործիական հոլովները կը հետեւին նաեւ ի հոլովումին: Պատիւ եւ հաշիւ բառերը, բացի սեռական-տրականի եւ գործիականի որոշ պարագաներէ, կրնան ամբողջովին ի հոլովումով հոլովուիլ:	

Չոլաքեանի նշածներէն՝ ք/ց հոլովում – Յակոբենք, Յակոբենց, Վարդանանք, Վարդանանց, աց, ից, անց – ուսուցիչներ, ուսուցչաց, ռուսեր, ռուսաց, Բագրատունիք, Բագրատունեաց, կեանք, կենաց, Աղուանք, Աղուանից, այրեր, արանց, տիկնայք, տիկնանց,

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐԸ

	Առաջին դեմք	
	Եզակի	Յոգնակի
Ուղղական Հայցական Սեռական Տրական Բացառական Գործիական	ես զիս իմ ինձի, ինձ ինձմէ ինձմով	մենք մեզ մեր մեզ(ի) մեզմէ մեզմով

	Երկրորդ դեմք	
	Եզակի	Յոգնակի
Ուղղական Հայցական Սեռական Տրական Բացառական Գործիական	դուն քեզ քու քեզ(ի) քեզմէ քեզմով	դուք ձեզ ձեր ձեզ(ի) ձեզմէ ձեզմով

	Երրորդ դեմք	
	Եզակի	Յոգնակի
Ուղղական Հայցական Սեռական Տրական Բացառական Գործիական	ան, ինք(ը) զայն, զինք(ը) անոր, իր անոր, իրեն անկէ, անորմէ, իրմէ անով, իրմով	անոնք, իրենք զանոնք, զիրենք անոնց, իրենց անոնց, իրենց անոնցմէ, իրենցմէ անոնցմով, իրենցմով

ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐԸ

	Առաջին դեմք	
	Եզակի	Յոգնակի
Ուղղական Հայցական Սեռական Տրական Բացառական Գործիական	իմս (իմինս) իմս (իմինս) իմինիս իմինիս իմինէս իմինովս	մերը (մերինը) մերը (մերինը) մերինին մերինին մերինէն մերինովը
	- Այս ստացական դերանունները կրնան նաեւ յոգնակի դառնալ՝ իմիններս, մերինները եւ հոլովուիլ նոյնպէս:	

	Երկրորդ դեմք	
	Եզակի	Յոգնակի
Ուղղական Հայցական Սեռական Տրական Բացառական Գործիական	քուկդ (քուկինդ) քուկդ (քուկինդ) քուկինիդ քուկինիդ քուկինէդ քուկինովդ	ձերը (ձերինը) ձերը (ձերինը) ձերինին ձերինին ձերինէն ձերինովը
	- Այս ստացական դերանունները կրնան նաեւ յոգնակի սառնալ՝ քուկիններդ, ձերինները եւ հոլովուիլ նոյնպէս:	

	Երրորդ դեմք	
	Եզակի	Յոգնակի
Ուղղական Հայցական Սեռական Տրական Բացառական Գործիական	անորը (անորինը), իրը (իրենը) անորը (անորինը), իրը (իրենը) անորինին, իրենին անորինին, իրենին անորինեն, իրենեն անորինով, իրենով	անոնցը (անոնցինը), իրենցը (իրենցինը) անոնցը (անոնցինը), իրենցը (իրենցինը) անոնցինին (իրենցինին) անոնցինին (իրենցինին) անոնցինեն (իրենցինեն) անոնցինով (իրենցինով)
	- Այս ստացական դերանունները կրնան նաեւ յոգնակի սառնալ՝ անորները (անորինները), իրենները (իրենինները), անոնցները (անոնցինները), իրենցները (իրենցինները) եւ հոլովուիլ նոյնպէս:	

Աղբիւրներ

Դիմել հետեւեալ աղբիւրներուն՝ յաւելեալ մանրամասնութիւններու համար:

-Ա. Գ. Աբրահամեան, Բ. Յ. Վերդեան, Վ. Ա. Քոսեան, Հայերէն լեզուի դասագիրք, երկրորդ տպագրութիւն, Երեւան 1968

-Յովհաննէս Գազանճեան, Նոր քերականութեան արդի հայերէն լեզուի, միջին դասընթացք, պատկերազարդ, հինգերորդ տպագրութիւն, հրատ.՝ Գրատուն Ս. Յակոբեան, Կ. Պոլիս, 1934, 237 էջ:

-Արմենակ Եղիայեան, Արեւմտահայերէնի ուղղագրական, ուղղախօսական, ոճաբանական ուղեցոյց, հովանաւոր՝ Գալուստ Կիւլպենկեան հիմնարկութիւն, Պէյրութ 2022

-Յակոբ Չոլաքեան, Արեւմտահայերէն (կանոնակարգ եւ խնդիրներ) Ա. գիրք, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառեանի անուան լեզուի Ինստիտուտ, Երեւան 2017

Պատրաստեց Վրէժ-Արմէն Արթինեան, աջակցութեամբ Հուրի Գարաճեան-Եափունճեանի եւ Սանան Զէյթեանի:

2026-08-25